ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԻՍԱՀԱԿԵՎՅԱՆ ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՆՏՈՆԻՈ ՌԻՆԱԼԴԻԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Տ. Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Լենինգրադի Իսահակիևյան տաճարը, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ Պետերբուրգի գլխավոր եկեղեցին էր, չորրորդն է այդ անունով այնտեղ կառուցված եկեղեցիներից։ Առաջինը 1710 թ. հիմնադրվել և կառուցվել էր Սենատի հրապարակում, Պետրոս Մեծի անմիջական ցուցումով. այն փայտակերտ էր, չափերով՝ փոքր։ Կարճ ժամանակ անց՝ 1717—1727 թթ. այդ եկեղեցին վերափոխվում, դարձվում է քարակերտ։ Ճարտարապետներ Գ. Մատարնովիի և Ն. Գերբելի կառուցած այդ եկեղեցին եռանավ, գմբեթավոր բազիլիկ էր։ Ափերը դեռ չամրացված նևա գետին շատ մոտ գտնվելու հետևանքով, շատ չանցած, եկեղեցու շինությունը նստվածքներ է տալիս, պատերին հայտնվում են ճեղքվածքներ, ապա հրդեհից այն վերջնականապես խարխլվում է և 1763 թ. քանդվում։

Այդ ընթացքում քաղաքաշինարար Ս. Զևակինսկին վերամշակել էր քաղաքի կենտրոնական մասի հատակագիծը, որով և ստեղծվել էր մի նոր հրապարակ։ Այդ հրապարակում ճարտարապետ Անտոնիո Ռինալդիի նախագծով 1768—1801 թթ. միջոցում կառուցվում է Իսահակիևյան երրորդ տաճարը, որը նույնպես երկար չի գոյատևում։ Այդ նույն տաճարի տեղում, նրա հիմքերի վրա, մասամբ արեելակողմի հատվածում պահպանված պատերի օգտագործումով, 1818—1858 թթ. ճարտարապետ Ոգյուստ Մոնֆերանի նախագծով կառուցվում է Իսահակիևյան չորրորդ տաճարը, որը գոյատևում է մինչև այժմ և օգտագործվում որպես թանգարան (գծ. 1)։



1. Իսահակիևյան տաճարի՝ Ա. Ռինալդիի և Օ. Մոնֆերանի կազմած գլխավոր հատակագծերի համադրումը։

Իսահակիևյան տաճարը նվիրված է Պետրոս Մեծի հիշատակին, բայց քանի որ նրա ծննդյան օրը (30 մայիսի, 1672 թ.) համընկնում է բյուզանդացի լեգենդար գործիչ ս. Իսահակ Դալմատացու անվան տոնախմբությունների օրվան, եկեղեցին էլ կոչել են նրա անունով՝ Իսահակիևյան։

Սեզ հետաքրքրողը միմյանց փոխարինող չորս Իսահակիևյան եկեղեցիներից նախավերջինն է՝ Ա. Ռինալդիի (1710—1794) կառուցածը։ Այս տաճարը ներքին խաչաձև հիմքով, կենտրոնագմբեթ շինություն էր։ Ըստ նախագծի, այն պիտի լիներ հինգ գմբեթանի, գլխավոր գմբեթը՝ կենտրոնում, առանձին կանգնած չորս հզոր մույթերը միմյանց կապող կամարների վրա,

չորս երկրորդական գմբեթները՝ քառակուսի հատակագծով կենտրոնական ծավալի անկյունների վրա։ Խաչաձևություն ստեղծող խորանները հարում էին կենտրոնական ծավալի չորս նիստերի առանցքային մասերին։ Գլխավոր մուտքը արևմտակողմից էր, այնտեղ էլ կանգնեցված էր եռաստիճան ծավալներով զանգակատունը։ Մուտքեր կային նաև հյուսիսակողմից ու հարավակողմից (գծ. 2)։



2. Իսահակիևյան տաճարի՝ Ա. Ռինալդիի կազմած հատակագիծը։

Տաճարի ընդհանուր հատակագծային լուծումը առաջին իսկ հայացքից հիշեցնում է Էջմիածնի Մայր տաճարի հատակագիծը (գծ. 3)՝ մանրամասների տարբերությամբ հանդերձ։ Պատկերի այդպիսի հարազատ մի այլ ընդհանրություն թերևս չկարողանանք հիշատակել։ Հետաքրքիր է, որ տաճարի մոտ զանգակատան նույնպիսի տեղադրություն տեսնում ենք դարձյալ Ռինալդիի կառուցած Համբուրգի տաճարում (1762—1772)։

Կասկած չի հարուցում այն, որ Իսահակիևյան այս տաճարի նախագծի հեղինակը ծանոթ է եղել Էջմիածնի-Բագարանի-Անիի Առաքելոց տաճարների ճարտարապետությանը։ Այդ հնարավորությունը նրան պիտի ընձեռած լինեն Մխիթարյանները, ս. Ղազարի կղզում՝ իրենց հարուստ գրադարանով։

XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանի և Եվրոպայի բազմաթիվ ճանապարհորդներ և Արևելքով հետաքրքրվող շատ արվեստագետներ էին գալիս Հայաստան ու Էջմիածին։ Ռուսաստանում տասնյակ տարիներ աշխատելով, ականավոր ճարտարապետ Ռինալդին, բնականաբար, պետք է եկած լինի Վաղարշապատ՝ Էջմիածինը տեղում տեսնելու։

Ռինալդիի հայրենիքում է գտնվում Հռոմի ս. Պետրոսի հռչակավոր տաճարը, որի կենտրոնական մասը կառուցված է նույն՝ Էջմիածնի մայր տաճա-





3. Էջմիածնի Մայր տաճարի հատակագիծը (վերակառուցված V դարում)։
4. Իսահակիևյան տաճարի Միհայլով II-ի կազմած հատակագծերից ամենավաղ տարբերակը։

րի և Բագարանի սկզբունքով և դրանցից տարբերվում է արևմտյան խաչաթևի ձգվածությամբ։ Այդ պատճառով էլ այն անվանվում է բազիլիկ։ Հետաքրքիր է, որ Իսահակիևյան տաճարի՝ մոնֆերանյան նախագծի մշակման ժամանակներում հայտարարված մրցույթի մասնակից ռուս և այլազգի ճարտարապետներ Ստասովը, Միխայլով եղբայրները, Մելնիկովը, Բրետտին, Բազենը իրենց նախագծերում, ի հակադրություն Մոնֆերանի ձգված համաչափություններով հատակագծի, նախընտրում էին հիմքում քառակուսի պարագծերով հատակագծեր (գծ. 4), դարձյալ հետևելով Էջմիածին-Բագարան և





5. Անիի Առաքելոց հինգ գմբեթանի եկեղեցու հատակագիծը (X դ.)։
6. Կոստանդնուպոլսի Առաքելոց եկեղեցու հատակագիծը (VI դ.)։

Անիի Առաքելոցի (գծ. 5) սկզբունքներին (և ոչ բյուզանդականին, ինչպես նշում է Ն. Նիկիտինը)[1]։ Ասենք, որ բյուզանդական Առաքելոցը հիմքում խաչաձև էր և ոչ քառակուսի (գծ. 6)։

Կարևոր է հիշել, որ քրիստոնեությունը, որպես պետականորեն ընդունված կրոն, առաջինը ճանաչվել է Հայաստանում, մոտ 301 թ., որտեղ էլ կառուցվել է եկեղեցական ամենավաղ շենքերից Էջմիածնի Մայր տաճարը։ Այս էական հանգամանքը միշտ էլ հայտնի է եղել, և նոր եկեղեցու շինության նախաձեռնողները այդ գործում հաճախ դիմել, նմանեցրել են ամենահին, ամենահամբավավոր օրինակին՝ հայկական առաքելական եկեղեցու աթոռանիստ Էջմիածնին։

Մոտավորապես նման հատակագիծ է ունեցել նաև Բյուզանդիայի մակեդոնական (հայկական) կայսերական դինաստիայի հիմնադիր Բարսեղ (Վասիլ) Ա-ի, մասնագետների պնդմամբ՝ հայկականի ձևով կառուցած Նեա եկեղեցին (875—881), որի լոկ նկարագրությունն է այժմ պահպանվում գրականության մեջ։ Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլսի Առաքելոց հինգ գմբեթանի եկեղեցուն, ապա այն չէր կարող նախօրինակ լինել, քանի որ դրա հիմնական ծավալը հատակագծում ոչ թե քառակուսի կամ ուղղանկյուն էր, այլ խաչաձև։ Անկյունային մասերում ծավալներ չկային, հետևաբար չորս երկրորդական գմբեթները չէին տեղադրվի անկյունագծային ուղղությամբ, մինչդեռ Ռինալդին չորս փոքր գմբեթները պիտի տեղադրեր քառակուսու չորս անկյուններում։ Կոստանդնուպոլսի Առաքելոցում դրանք տեղադրված են եղել խաչաթևերի վրա։

Ճարտարապետ Անտոնիո Ռինալդին իր մասնագիտական կրթությունը ստացել է հայրենի Իտալիայում, աշակերտել Հռոմի հայտնի ճարտարապետ Լուիջի Վանվիտելլիին։ 1751 թ. Կ. Ռազումովսկու հրավերով ժամանում է Ռուսաստան։ Սկզբում աշխատում ու կառուցումներ է իրականացնում Ուկրաինայում։ Ենթադրվում է, որ նա Բատուրինում 1752—1753 թթ. մասնակցել է պալատի կառուցմանը։ 1755 թ. մեկնելով Պետերբուրգ, աշխատում է կոմս Մ. Վորոնցովի համար։ 1756 թ. նշանակվում է պալատական ճարտարապետ՝ թագաժառանգի մոտ։ Ռինալդին Օրիենբաումում (այժմ՝ Լոմոնոսով) ստեղծում է հայտնի Չինական պալատը և Կատալնայա գորկան, պարկային բազմաթիվ տաղավարներ, Պետրոս III-ի պալատը (1758—1762) և այլ բազմաթիվ բարձրարվեստ շինություններ։

Ռինալդիի կառուցները անդրադարձնում են «բարոկկո» ոճով՝ բարդ ծավալատարածական հորինվածքներից ու հարթության հարուստ պլաստիկ մշակումներից անցումը կլասիցիզմին հատուկ՝ շինությունների արտաքին մշակման զուսպ ձևերին ու ծավալային ուրվագծերի որոշակիությանը։ Նրա բոլոր շինությունները առանձնանում են ներքին հարդարման մեծ վարպետությամբ, ճարտարապետական կոմպոզիցիայում քանդակագործական և գեղարվեստական ստեղծագործությունների ներդրումով։ Այդ իմաստով հիշատակելի է 1766—1781 թթ. Ռինալդիի կառուցած Մարմարյա պալատը, որտեղ այժմ Լենինի կենտրոնական թանգարանի Լենինգրադյան մասնաճյուղն է գտնվում։ Այս վերջինին զուգընթաց 1768—1790 թթ. Ռինալդին նախագծում և կառուցում է Իսահակիևյան տաճարը, որը, սակայն, չավարտած, մոտ 1790 թ. Ռուսաստանը թողնում, մեկնում է հայրենի Իտալիա և այնտեղ, 1794 թ. կնքում իր մահկանացուն։

Ճարտարապետության պատմությանը վերաբերող աշխատություններում նշում են Ռինալդիի Իսահակիևյան տաճարի կառուցման խիստ դանդաղ ընթացքը, իսկ ձգձգման պատճառների մասին ոչինչ չեն հաղորդում[2]։ Ճարտա-

---

[1] Н. П. Никитин, Огюст Монферран, Л., 1939.

[2] Г. В. Жидков, Русское искусство XVIII века, М., 1951; А. Н. Петров, Е. А. Борисов, А. П. Науменко. Памятники архитектуры Ленинграда, Л., 1958; История русского искусства (под ред. И. Э. Грабаря), т. VI, М., 1961; М. Г. Колотов, Исаакиевский собор, Л.—М., 1966; Н. Н. Коваленская, История русского искусства XVIII века, М., 1962.

բապեսի՝ Իտալիա մեկնելուց հետո տաճարի շինարարությունը 1801 թ. մի կերպ ավարտին է հասցնում ճարտարապետ Վ. Բրեննան, որը մեծ չափերով խախտելով նախագիծը, չի իրականացնում տաճարի չորս երկրորդական գմբեթների կառուցումը և միաժամանակ փոքրացնում է կենտրոնական գմբեթը։

1796 թ. Պավել I-ը, գահ բարձրանալով, տարվում է Միխայլովյան ամրոցի կառուցումով և այնտեղ է տեղափոխել տալիս Իսահակիևյան տաճարում դեռ չօգտագործված ամբողջ պիտանի մարմարը։ Դրանով պետք է՝ բացատրել, որ տաճարի վերնամասի (հիմնական քիվից վերև՝ ատիկայի հատվածի) աղյուսաշեն պատերը մարմարով չեն երեսապատվել, մնացել են բաց։

Արդ, ինչով բացատրել Ռինալդիի՝ ղրսից և ներսից ճոխությամբ մարմարապատված տաճարի հազիվ 18-ամյա գոյությունը և նրա տեղում տաճարի նոր շինության ստեղծման անհրաժեշտությունը։ 1809 թ. հայտարարված է եղել Իսահակիևյան տաճարի վերակառուցման մրցույթ, որի ծրագրային առաջադրանքում Ռուսական գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Ա. Ստրոգանովը գրել է՝ «Որոնել միջոցներ տաճարը զարդարելու համար և նախագծել նոր գմբեթ, որը վսեմություն ե գեղեցկություն հաղորդի այսքան համբավավոր շինությանը»[3]։ Մրցույթը, սակայն, արդյունք չի տալիս գլխավորապես այն պատճառով, որ նրա մասնակիցները. հակառակ առաջադրանքի ռեալ բնույթին, պահանջում էին հիմնիվեր քանդել Ռինալդիի կառուցած եկեղեցին, մինչ Ալեքսանդր I-ը կարգադրել էր հնարավոր չափով պահպանել նախորդի հատկապես արևելակողմի այն մասերը (խորանները), որոնք ժամանակին օծվել էին ու անվանակոչվել, իսկ դրանք լրիվ վերացնելը վիրավորական կդիտվեր հիմնադիրների հիշատակի նկատմամբ։ Եկեղեցու վերակառուցման գործը դադարեցվում, հետաձգվում է մինչև 1812 թ. Հայրենական պատերազմի ավարտը։ Դրանից հետո սկսվում է Իսահակիևյան տաճարի կառուցման մոնֆերանյան ժամանակաշրջանը։

Մենք չենք բաժանում Մ. Կոլոտովի և ուրիշների այն կարծիքը, որ իբր Ռինալդիի՝ «հապճեպ ավարտին հասցված Իսահակիևյան տաճարը չէր համապատասխանում մայրաքաղաքի կենտրոնի նկարագրին»[4]։ Մեր համոզմամբ վերոհիշյալ մրցութային առաջադրանքը ճիշտ է եղել, լիապես տրամաբանական, քանի որ Ռինալդիի նախագծով կառուցված տաճարը ծավալով փոքր չէր, արտաքին ծավալատարածական հորինվածքով մոնումենտալ էր ու տպավորիչ։ Եվ եթե շինության վերնամասի աղյուսաշեն պատը ներքնամասի ձևով երեսապատվեր մարմարով, կառուցվեին նախագծով մշակված անկյունային դասավորության չորս փոքր գմբեթները. ճարտարապետ Բրենանայի կողմից փոքրացված կենտրոնական գմբեթը վերափոխվեր և համապատասխանեցվեր նախագծային չափերին, արևմտյան կողմից տաճարին հարող զանգակատունը նույնպես համապատասխանեցվեր Ռինալդիի նախագծած պատկերին, ապա այդ շինությունը խորթ չէր երևա հրապարակի շուրջը նոր-նոր կազմավորվող ներդաշնակ համալիրում։ Դեռ ավելին, Ռինալդիի նախագծով կառուցվող տաճարը, որ իր ձևերով հարազատության եզրեր ուներ ռուս պատմական ճարտարապետության հուշարձանների հետ, կնշանավորեր ազգային արվեստի զարգացման մի նոր աստիճան։

Անհնար է, որ Ռինալդիի կառուցած տաճարի տեղում մի նոր տաճարի կառուցման անհրաժեշտությունը թելադրված լիներ նրանով, որ Ռինալդիի շինության հիմքում դրված է եղել Հայ Լուսավորչական եկեղեցու հատակագծապատկերը, որպես նախօրինակ։ Պատմականորեն հաստատված է, որ ռուս և հայ եկեղեցիները միշտ էլ եղել են բարեկամական կապերի մեջ։ Դա մեծ մասամբ արտահայտվել է նաև ռուսական հնագույն եկեղեցիների շինությունների կառուցմանը հայ վարպետ-արվեստագետների ակտիվ մասնակցության փաստով[5]։

---

[3] М. Г. Колотов, նշվ. աշխ., էջ 10։

[4] Памятники архитектуры Ленинграда, ред. Н. Н. Брунов. Л., 1958. История русского искусства (под ред. И. Э. Грабаря), т. III, с. 304—310, 503.

[5] О. Х. Халпахчьян, Армяно-русские культурные отношения и их отра-

Պետք է կարծել, որ այս խնդրում դեր է խաղացել նոր ժամանակների և նոր հայացքների գործոնը։ Հայրենական պատերազմի հաղթական ավարտին Ալեքսանդր I-ը, գտնվելով Եվրոպայում, գայթակղվում է վերելք ապրող «ամպիր» ոճով ստեղծված շքեղ շինությունների գրավչությամբ, գերադասում է Պետերբուրգի գլխավոր եկեղեցին կառուցել կլասիցիզմի այդ ոճով, մանավանդ, որ այն արդեն այս կամ այն չափով թափանցել էր Ռուսաստան ու սկսվել էր ձևավորվել որպես ռուսական «ամպիր»։

Եկատերինա II-ի օրոք ավարտին չէր հասել Ռինալդիի կառուցվող տաճարը։ Ճարտարապետը, հովանավորող չունենալով, թողնում, հեռանում է Իտալիա։ Պավել I-ը այդ կառուցման նկատմամբ անուշադիր, առաջ էր մղում իր ամրոցի շինարարությունը, Ալեքսանդր I-ն էլ պիտի տեղ տար իր հզորությունն ու ժամանակը նշանավորող մի նոր մեծագործության, ի դեմս Իսահակիևյան նոր տաճարի։

Զ. Սեմյոնովան մի առիթով գրում է՝ «VI—VII դարերում Հայաստանում մշակված կենտրոնակազմ հատակագծերի նմանակները ռուս ճարտարապետության մեջ կիրառվում էին նաև XVII և նույնիսկ XVIII դարերում» (գծ. 7, 8)[6]։ Նա իր այդ եզրակացությունը հաստատելու համար բերած օրինակների շարքում կարող էր հիշատակել նաև Ռինալդիի Իսահակիևյան տաճարը, որը, սակայն, չի արել։





7. Դյակովո եկեղեցու հատակագիծը նույնանուն գյուղում (ըստ Սեմյոնովայի)։
8. Ավանի Կարողիկէ հին գմբեթանի եկեղեցու հատակագիծը (VI դ.)։

Ռուսական արվեստի ու ճարտարապետության պատմության շատ հրատարակություններում Ռինալդիին երբեմն չեն անդրադառնում, իսկ եթե այնուամենայնիվ թվարկում են նրա գործերը, Իսահակիևյան տաճարի մասին չեն խոսում, չեն հիշում, գծագրական նյութեր չեն ներկայացնում[7]։ Անգամ Ն. Նիկիտինը, որ Իսահակիևյան տաճարին և նրա հեղինակին՝ Օգյուստ Մոնֆերանին նվիրված ուսումնասիրություն է հրատարակել, Ռինալդիի տաճարի

жение в архитектуре, Ереван, 1957, նույնի՝ Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении, М., 1977.

[6] З. Ф. Семенова. О взаимосвязях русской и армянской средневековой архитектуры (Պատմա-բանասիրական հանդես, 1986, № 4, էջ 45)։

[7] Г. В. Жидков, Русское искусство XVIII века, М., 1951; Н. Н. Коваленская, История русской архитектуры, краткий курс, М., 1951.

ամբողջական հատակագիծ չի տեղադրել և ընդհանրապես այդ ճարտարապետի ու նրա այդ գործի մասին գրեթե ոչինչ չի ասում[8]։

Ռուս և հայ ժողովուրդների ծանոթությունն ու կապը կյանքի տարբեր ոլորտներում դարերի հնություն ունի։ Մեր փոխհարաբերությունները արվեստի և ճարտարապետության անդաստանում թերևս այն նյութական, դրանով էլ շատ կարևոր փաստերից են, որոնք հաստատում են հնուց ի վեր գոյություն ունեցած ակտիվ կապերը նաև հասարակական ու քաղաքական, ռազմական ու այլ ասպարեզներում։ Այդ հարաբերությունները եղել են արդասաբեր, անմիջական ու հարատևել են դարերով, ընդհուպ, մինչև մեր օրերը։ Այդ ֆոնի վրա պետք է բնական համարել, որ Ռինալդին հնարավոր է գտել Պետերբուրգի Իսահակյան տաճարի իր նախագծի հիմքում դնել Էջմիածնի Մայր տաճարի հատակագծապատկերը։

О ПРОЕКТЕ ЛЕНИНГРАДСКОГО ИСААКИЕВСКОГО СОБОРА, СОЗДАННОГО АРХИТЕКТОРОМ АНТОНИО РИНАЛЬДИ

Т. А. МАРУТЯН

Резюме

Ленинградский Исаакиевский собор, который до Октябрьской революции был главной церковью Петербурга, является четвертым по счету из числа построенных здесь одноименных храмов. Третий Исаакиевский собор /1768—1801/ был построен по проекту Антонио Ринальди и простоял до 1818 г. На основании и с использованием восточных стен этого храма был сооружен нынешний Исаакиевский собор /арх. О. Монферран/. Прототипом третьего Исаакиевского собора безусловно является Эчмиадзинский кафедральный собор /V в./, а не храм Апостолов Константинополя /VI в./, как считает историк архитектуры Н. П. Никитин.

ABOUT THE PROJECT OF THE LENINGRAD ISAKIEVSKI CATHEDRAL CREATED BY ARCHITECT ANTONIO RINALDI

MARUTIAN T. H.

Summary

The Leningrad Isakievski Cathedral, which was the main church in St. Petersburg until the revolution, is the fourth of the same name of temples built here. The third Isakievski Cathedral (1786—1801) was buil according to the plan of Antonio Rinaldi and stood until 1818. The present Isakievski Cathedral (architect O. Monferrant) was built on the foundation and use of the eastern walls of that temple. The prototype of the third Isakievski Cathedral undoubtedly is the Cathedral (5th century) of Echmiadzin, and not the Temple of Apostles of Constantinople (6th century), as the historian of architecture N. P. Nikitin believes.

---

[8] Н. П. Никитин, նշվ. աշխ.։